


տայայտութիւնն է աղօթքը՝ որդիական անկեղծութեամբ ու վստահութեամբ արտասանած աղօթքը՝ երբ աղօթողն ամենեւին չի երկմտում թէ Երկնաւոր Հայրը իւր խնդրածքը պէտք է լսէ և կատարէ՝ ի հարկ է այն, ինչ որ իւր համար բարի է և ինչ որ Նա Ինքն, ամենիմաստ և գորովագութ Հայրը, ամենից լաւ ընտրել կարող է (Մատթ. Լ. 7—11)։ Ահա այս մտքով՝ իբրեւ տիպար, իբրեւ կենդանի օրինակ, թէ ինչպէս պէտք է լինի Աստուծոյ սիրով լեցուած ջերմեանովն սրտի զեղումը՝ Փրկիչն ընծայել է մեզ տերունական աղօթքը՝ Հաւատացեալ հոգին կտրուում է այստեղ ամենից առաջ բոլոր երկրաւոր զբաղմունքներից, սաւառնում է գէպի Երկնաւոր Հօր կայանները, փափագում է, որ Նորա անունը սուրբ լինի՝ յայտնուի Նա աշխարհին Իւր բոլոր սրբութեամբ և հաստատէ այստեղ Իւր թագաւորութիւնը։ Իւր կատարեալ իշխանութիւնը, որպէս զի երկնային երանութիւնը երկրի վերայ ևս տիրէ, և ինքն աղօթողը ուրիշների հետ մէկտեղ մասնակից լինի այդ երանութեան, Իւր հոգեւոր պէտքերը, Իւր յաւիտեական կեանքի հոգսերն այսպէս Տիրոջ ձեռքը յանձնելուց յետոյ միայն Նա համարձակութիւն է ստանում Նաեւ իւր մասնաւոր աշխարհային կեանքի պիտոյքների համար խնդրելու՝ ամենաշափաւոր կերպով, և ապա խնդրում է վերացնել մէջտեղից այն արգելքները, որոնք պատրաստ են հանդէս դալ ամեն բոպէ և բաժանել, խորթացնել Նորան իւր Հօրից։ Սորանով բացատրուում է Նաեւ աղօթքի իսկական նպատակը. ոչ թէ ճնշումն գործ դնել Աստուծոյ վերայ, որ ոչինչ չստան գիտէ արդէն, թէ մեզ ինչ է պէտք, այլ բանալ Նորա առաջ մեր սիրտը, ցոյց տալ մեր ընդունակութիւնը Նորա միշտ պատրաստ շնորհների համար։ Այդ պատճառով և արգելում է Փրկիչը շատախօսել աղօթելիս, և կատարեալ պարզութիւն է պահանջում՝ կատարեալ խոնարհամտութիւն, որ արդիւնք է այն գիտակցութեան, թէ մենք ըստ ամենայնի մեղաւոր և պարտապան ենք Աստուծոյ առաջ և միայն ընդունել կարող ենք Նորանից, ոչինչ տալ։

Սիրել Աստուծուն ահա այսպիսի զգացումներով՝ այդ նշանակում է ընդունել Նորան իբրեւ բոլոր ճշմարիտ, վսեմ, յաւիտեական բարիքների ամփոփումն, Նորան նուիրուել ամբողջապէս և Նորանից դուրս ոչ մի ժամանակաւոր բարիք չճանաչել, որ մեզ Նորանից հեռացնել կարող էր, Խընդիրն այն չէ ի հարկ է, որ այդպիսով զրկենք մեր անձը երկրաւոր բարիքներից, արհամարհենք բնական աշխարհի գեղեցկութիւնները։ Ինքը Փրկիչն, ինչպէս յայտնի է, ոչ մէկն էր անում և ոչ միւսը, և Աստուծոյ ստեղծած բարիքները Աստուծոյ գծած սահմաններում վայելել ոչ որի չէր արգելում։ միակ աշխարհային բարիքը, որին Նա իրօք գէտ

է, որի մասին առանց արգար զայրոյթի խօսել չէ կարող՝ աշխարհի կուռք անիրաւ մամոնայն է, այն պատճառով, որ այստեղ բոլոր մարմնաւոր ցանկութիւնները մարմնացած, գուցէ լաւ ևս է ասել գաղափարականացած՝ են ներկայանում։ Սակայն նոյն իսկ այդ անիրաւութեան մամոնայն, կարելի է համարում Նա մի բարի նպատակի համար գործ դնել (Ղուկ. ԺԶ. 9—11), և նպատակայարմար գործադրութեամբ բարի և արգար են դառնում աշխարհի բոլոր բարիքները, Հարկաւոր է միայն, որ մեր սիրտը երկու տեղ բաժանուած չլինի, որ մեր բոլոր իղձերի միակ և վերջնական նպատակը Աստուծոյ լինի։ Նորա մօտ ժողովուրին մեր սրտի բոլոր գանձերը, իսկ աշխարհայինը միայն իբրեւ միջոց ծառայէ այդ գանձերը ժողովելու և տեղ հասցնելու։ Մենք պէտք է պատրաստ լինինք, երբ Տէրը մեզնից պահանջում է, զոհելու Նորա համար ամեն ինչ, Նաեւ մեր անձը, որովհետեւ մեզ, մեր աշխարհային եւս ի կորցնել՝ Աստուծուն գտնել է նշանակում, իսկ Աստուծուն գտնել՝ ամեն ինչ գտնել է։

Կ. Վ.



«ԿԱՆՈՆ»

ԹԱԿԵՈՍԻ ԱՌԱՔԵԼՈՅՆ»



Հայաստանի առաջին Լուսաւորիչը սուրբ առաքեալն Թադէոս, մարտիրոսական պատկ ընդունեց Շաւարշան քաղաքի մօտ, ուր և եղաւ Նորա ս. մարմնի ամփոփումը։ Ս. Առաքեալի յիշատակը շատ կանուխ ժամանակներից կատարւում է Հայոց մէջ. Նորա վկայաբանութիւնը Թարգմանուեցաւ հայերէն Ծ. դարում Սամուէլ կաթիկոսպոսի ձեռքով. Նորա ս. նշխարներն յայտնուեցան տեսիլքով Կիրակոս ճգնաւորին Տ. Թովհան Մանգակունի կաթողիկոսի օրով Վահան Մամիկոնեանի մարգպանութեան ժամանակ։ Մովսէս Խորենացին պատմելով ս. Գրիգոր Լուսաւորչի ծննդեան մասին, յիշում է, որ Նորա մօր յղուութիւնն եղաւ «մօտ առ դիրս սրբոյ առաքելոյն» իսկ ս. Հռիփսիմեանց ներբողի մէջ յիշում է ս. Գրիգորի կոչումն իբրեւ յաջորդ ս. առաքելոյն Թադէոսի և Բարթողիմէոսի թէ պատմութեան և թէ ներբողի մէջ Մ. Խորենացին յայտնում է, որ աստուածային

նախասահմանութեամբ վիճակուեցաւ ս. Գրիգորին լցուցանել ս. Թադէոսի «Հոգեւոր մշակութեան պակասութիւնը», ծագեալ լուսաւորդ մեծ, խօսքը ուղղելով առ ս. Գրիգոր, ասում է մեր քերթողահայրը ի խորոց անդրնդոց քաղցրանուագ լուսովը զաշխարհարձակ ճառագայթալոյս փայլումն քոց սրբոց հարցն աւետարանին Թադէոսի և Բարթոլղիմէոսի երկաքանչիւր լուսով փթթել զհիւսիսիս: Բազմաթիւ աւանդութիւններ և յիշատակներ կան ս. Թադէոսի մասին Հայոց երկրում և հայ ժողովրդի մէջ. նորա անունով վանքեր կան և զանազան ուխտատեղեր, որոնք հին ժամանակներից պահում են ս. առաքեալի յիշատակը: այսպէս օրինակ՝ Սեպուհ սարի վերայ Աւագ վանքը, որ ըստ աւանդութեան հիմնել է ս. Թադէոս և ուր պահուում են նորա աջ բազուկն և ծնօտը: Խարբերդու Դաանմու վանքը: Բալուի մօտ քաղցրահացեաց ս. Աստուածածնի վանքը: Անձեւացեաց գաւառում քանքուարի (Կանգուար) ս. Թադէոս Առաքելոյ եկեղեցին այն հնագոյն յիշատակարաններն են, որոնց անուան հետ կապուած են ս. առաքելոյ քարոզութեան վերաբերեալ զանազան աւանդութիւնները: Ս. Էջմիածնի մէջ պահուող Հայոց նուիրական սրբութիւններից մէկը ս. Գեղարդը բերուած է Հայաստան նոյն ս. Առաքեալի ձեռքով: Պակաս չեն բազմատեսակ աւանդութիւններ ս. Առաքեալի մասին նաեւ եկեղեցական մատենադրութեան մէջ: Ս. Առաքեալի վկայաբանութիւններն ունին մի քանի խմբագրութիւն. նոցա հետ սերտ կապ ունին ս. Սանդուխտի և ս. Ռսկեանց պատմութիւնները: կան յիշատակարաններ ս. Առաքեալի նշխարաց գիւտի մասին: Իսկ եկեղեցական կարգերի մէջ նշանակուած են տօներ ս. Թադէոսի անունով առանձին և ուրիշների հետ: այսպէս՝ հին տօմարով կան վկայաբանութիւններ ս. Առաքեալի յիշատակի համար: ... քաղոց ամսի ԺԾ. կամ դեկտ. 23-ին վկայաբանութիւն Թադէոսի առաքելոյն և որոց ընդ նմա. Է. Մարերի ի Գ. կամ մայիսի 30-ին գիւտ նշխարաց սրբոյն Թադէոսի առաքելոյն և Սանդխտոյ կուսին. Բ. Ահեկի Բ. կամ ապրիլ 9-ին Զրիստոսի 72 աշակերտաց տօնին և Դ. Մար-

գաց ի Դ. կամ յունիսի 30-ին երկոտասան առաքելոց տօնին:

Աչքի առաջ ունենալով, որ ս. Թադէոս առաքեալի յիշատակն այսքան հին ժամանակից և այսքան յաճախ տօնուել է Հայոց եկեղեցում, զարմանալի էր երեւում, որ եկեղեցական երգերի մէջ ս. Առաքեալի անուանը նուիրած յատուկ շարական չկայ: Շատաւանակներին և տօներին երգուում են եկեղեցում կամ 72 աշակերտաց կամ 12 առաքելոց շարականներ:

Այս օրերս իմ ձեռքս անցած մի ձեռագիր շարականի մէջ, որ գրուած է 1483 թուին Բաղէշում ի թիւս այլոց, տեսայ և ս. Թադէոսի շարականը սոյն վերնագրով «Կանոն Թադէոսի առաքելոյն, ԴԶ» Նոյնութեամբ ընդօրինակելով և հրատարակութեան տալով այդ շարականը, որ 10 տնից է բաղկացած, պարտք եմ համարում յայտնելու, որ Մայր Աթոռիս զրչեայ շարականներից մէկի մէջ, որ 1891 թուին կարճ ժամանակով ինձ էր յանձնուած ստուգելու (թուական չունի), կայ այս շարականի վերնագիրն և առաջին տնից մի մասն: Կասկած չկայ, որ նոյն Մայր Աթոռի մատենադարանի 73 զրչեայ շարականների մէջ, որոնք բոլորը տեսնելու յարմարութիւն չեմ ունեցած մինչև օրս, կրգտնուին սոյն շարականի աւելի լաւ օրինակներ. ցանկալի է որ այն անձինք, որոնց մատչելի է Մ. Աթոռի մատենադարանի հարստութիւնը, կարողանային ստուգել սոյն շարականը, որպէս զի կարելի լինէր իմանալ թէ նորա հնութիւնն և թէ մանաւանդ հեղինակի ո՞վ լինելը: Իսկ թէ ինչո՞ւ զործածութիւնից ելած է այդ շարականը, ո՞վ է, որ կարող է մի շարական ջնջել եկեղեցու կարգերից կամ աւելացնել, այնպիսի խնդիրներ են, որոնց պատասխանը շնորհակալութեամբ կուզէինք լսել Արարատ ամսագրից:

Կ. Կ.

ԿԱՆՈՆ ԹԱԴԵՈՍԻ ԱՌԱՔԵԼՈՅՆ.

ԴԶ. Այսաւր ցընցան խրախճանապէս եկեղեցիք հայաստանեաց և պարէ ուրախութեամբ համաձայ-

նեալ հրարուն զաւրացն տաւնելով ըզյիշատակ առաքելոյն թաղէոսի. վասն որո մաղթանաւք սորա կեցոյ ըզմեզ մարդասէր փրկիչ:

Այսար յընտրեալ աշակերտացն և ի խըմբից վարդապետաց սուրբ զառաքեալն թաղէոս առաքեցեր ի հայաստան լուսաւորիչ որդոց թորգոմայ. վս. որ:

Այսաւր ծընեալ որդիք լուսոյ մաքուր երկամբ աւազանին ի ձեռնն սուրբ հաւատապետին մեծ և ընտրեալ առաքելոյն լուսապայծառ քարոզութեան. վս:

Այսաւր կոչեաց զաղգըս հայոց նախահրաւեր կոչմամբ հոգւոյն ի հարսնութիւն սուրբ փեսային մուծանելով ի յառաքաստ ընդ բազմեցն անդրանկաց հոգոց. վս:

Այսաւր ինդայ մայր աստուծոյ տաճար բանին մարմնացելոյ յիշատակաւ հաւրն լուսոյ և աղաչեայ զլոյսն ի հաւրէ որ վառեցաւ մարմնով ի քոյդ յարգանդի. զի փրկեաց զանձինքս մեր ի փորձութենէ:

Այսաւր ժողովք նահապետացն և երջանիկ դասք արդարոցն համախըմբեալ սիրով ընդ մեզ հըրճիմք տաւնիւս վկայութեան առաքելոյն թաղէոսի. վս:

Այսաւր վկայն հանդիսաւոր վառեալ զինուտիգաւ խաչին եմուտ յատեան խրախուսելով և սատակեաց զչար ախոյեանն որպէս և դու կենսարեք փայտիւն. վս:

Այսաւր զգեղարդըն պատուական ետ մեզ նըշան պահպանութեան ներկեալ արեամբ կենարարին որով փրկիմք և ամրանամք յորոգայթից կրկին որսողաց. վս:

Այսաւր ծածկեալ գանձըն լուսոյ մաքուր նըշխարք երանելոյն վերացաւ ըզցաւ շնորհաց ի մաքրութիւն հոգոց մերոց և ի բուժումն ախտալից մարմնոց. վս:

Այսաւր և դու կոյս մարիամ արրահամեան տոհմին պարծանք ի փրկութեան մերոյ խորհուրդ առցես ընդ քեզ միջնորդ կենաց սուրբ զառաքեալն թաղէոս և հայցեսցես ի տեառն ըզթողութիւն մերոց յանցանաց:

ԵԿԵՂԵՅԱԿԱՆ ՔՐՈՆԻԿՈՆ

ԿԱԹՈՒԼԻԿ ԵԿԵՂԵՅԻ

Նոյեմբերի 30-ին գումարուած Վատիկանի գաղտնի կոնսիստորիայում պապը սարկաւագարգի* կարդինալութեան աստիճան տուաւ Դոմինիկեան կրօնաւոր Ռաֆայէլ Պիերոտտին և Յովսէփ Պրիսկօ եպիսկոպոսին: Մի քանի ուրիշ կարդինալներ ևս իրենց կարգերը փոխեցին, իսկ Միւնխենի համար նուիրակ նշանակուած Լորենցելլի եպիսկոպոսը արքեպիսկոպոսութեան տիտղոս ստացաւ: Բոլորեքեան սոքա Իտալիացիք են:—Բացի Լորենցելլիից նուիրակներ նշանակուած են՝ Մագրիտի համար Նափա, Լիսաբոնի համար Այուսի և Պարիզի համար Վլարի:

— Դիւլստի տեղ Փարիզի Վաթիկական ճեմարանի տեսուչ ընտրուեցաւ Բայմի արքեպիսկոպոսութեան փոխանորդ Պեշընար, Պապը շտապեց իւր հաւանութիւնը տալ, և նա դեկտեմբեր 14-ին հանդիսաւոր կերպով հաստատուեցաւ իւր նոր պաշտօնի մէջ:

— Քրանսիական խորհրդարանը կրկին 18,500 ֆրանկ պահասեցրել է այն գումարից, որ նշանակած է իբրեւ նպաստ ծերութեան կամ խեղութեան պատճառով պաշտօնից ելած հոգեւորականների համար: Annales catholiques թերթն իրաւամբ ցածութիւն է անուանում այդ արարմունքն՝ այն տեսակետից, որ ազատամիտ խորհրդականները չկարողանալով իրենց թշնամութիւնը, գէպի կրօնն ու եկեղեցին առհասարակ, մեծ հասոյթների և զօրեղ քաղաքական գիրքի տէր եկեղեցականների գէմ արտայայտել, խեղճերից ու անօգնականներից են վրէժ հանում:

— Նեապոլսում վախճանուեցաւ այնտեղի կարդինալ արքեպիսկոպոս Անուափիլլան, որի հետ Վիլհելմ Բ. կայսրը իւր ճանապարհորդութեան միջոցին այնպիսի խորհրդաւոր տեսակցութիւն էր ունեցել և մտերմական յարաբերութեան մէջ մտել: Հանգուցեալ կարդինալը մի ժամանակ պապացու էր համարուում: Բայց նորա դէպի գերմանացիք ցոյց տուած հակումը կասկածելի դարձրեց նորան ներկայ պապի շրջապատողների աշքում: Դրոնց բոլորի համակրութիւնը Քրանսիայի կողմն է:— Յամենայն դէպս երրեակ զաշնակցութիւնը կորցրած է համարում այսպիսով մի կարեւոր բարեկամ մօտակայ կոնկլաւի անդամներից:

— Ինքը պապը իւր առանձին համակրութիւնը և սէրը դէպի Քրանսիան ցոյց տուաւ կրկին վերջերս:



* ինչպէս յայտնի է, կարդինալները երեք կարգի են քաժանուում՝ սարկաւագ, սրէց եւ եպիսկոպոս, որոնց մէջ սակայն իրաւունքների մի առանձին տարբերութիւն չկայ: